իրաւունք չունեն, այն պատճառով, որ կսրբապղծի և այդ պէտք է վերագրել պարսիկ խաների մոլեռանդ ոգուն, որով նրանք արտայայտում են իրենց ծայրայեղ ատելութիւնը դէպի գիւղացիները։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	30
2	Ջունեոր	10
3	Միջակ	100
4	Ունեոր	23
5	Հարուստ	10
	Ընդամենը	173

Այստեղի հայ գիւղացիութիւնը վերջին տասը տարիների ընթացքում ենթակայ է զրկանքների ու հարստահարութիւնների աւազակային վամպիրների կողմից, որոնք սարերից ցած գալով սարսափ են տարածում խաղաղ, անպաշտպան գիւղացիութեան վրայ և նրան տնտեսապէս կազմալուծում և քայքայում։ Այս տխուր իրականութեան վրայ աւելացնենք և աղաների կամայականութիւնները, որով լրացրած կլինենք պատկերը։

Երբ ուղեկցիս հետ հեռանում էինք գիւղից, նա ցոյց տուեց ինձ մի տարօրինակ տեսարան.

— Տեսնում էք դրանց, պարոն վարժապետ, աղայի ձիերն են, որ արածում են հայի արտում։

— Ի՞նչ ես ասում, միթէ . . .

— Հապա ի՞նչ, խիղճ չունեն պարոն վարժապետ, խիղճ, դէ արիք այսպիսի տեղում ապրէք։

Ես ծանր տպաւորութիւնների տակ շարունակեցի ճանապարհս։

ՁԻԳԱՆ

—

Ղալամելիքից դէպի հիւսիս, քառորդ ֆարսախ հեռաւորութեան վրայ փռուած է պարսկա-հայաբնակ Զիգան գիւղը, որն ունի 29 տուն 186 շնչով, որի 98-ը արական է և 88-ը